Արձանագրության 4

Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բակային տարածքների նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման ԵՔ-ԳՀԾՁԲ-19/107 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

10.06.2019թ.
Ժամը՝ 10:30

ք. Երևան

Մասնակցում էին

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Կիրակոսյան /գնահատող/, Ռ. Աբրահամյան /գնահատող/
Ա. Հարությունյան /բացող/, Կ. Հարությունյան /բացող/

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

Բացակայում էր՝ հանձնաժողովի նախագահ՝ Տ. Իգիթյան/ԳԱՊ/

1. «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/107» ծածկագրով գնման ընթացակարգի նիստը նախագահողի մասին

Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինությունը՝ նիստը նախագահեց հանձնաժողովի անդամ Ա. Հարությունյանը՝ համաձայն գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի /այսուհետ՝ Կարգ/ :

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության մասին

Ընդունել ի գիտություն որ.

«Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի՝ հարցում էր ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի մասնակցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունի ժամկետանց հարկային պարտավորություն:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 դեմ - 0:

3. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՁ Վահրամ Կնյազյան	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4, դեմ - 0:

4. ԵՔ-ԳՀԾՁԲ-19/107 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի և պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ ԵՔ-ԳՀԾՁԲ-19/107 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարել «Վահրամ Կնյազյան» Ա/Ձ-ին և վերջինիս ներկայացնել **Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի բակային տարածքների նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման** պայմանագիր կնքելու առաջարկ:

5.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Տ. Իգիթյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 10:35-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցե՝ ք. Երևան, Արգիշտի փողոց 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

Հանձնաժողովի

Անդամներ՝ ---------- Ա. Կիրակոսյան

---------- Կ. Հարությունյան

---------- Ա. Հարությունյան

---------- Ռ. Աբրահամյան

Քարտուղար՝ ---------- Ա. Համբարձումյան